

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/6

19 հունվարի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանի 16.12.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 17.11.2015 թ-ի թիվ 466-11 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանի գանգատում բերված փաստարկները.**

17.11.2015թ-ին ընդունված «Հարկ վճարողի կողմից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու վերաբերյալ» թիվ 466-11 որոշման մեջ ելակետային տվյալների գծով արտացոլված պարտավորությունների ժամանակահատվածը և թույլ տրված հարկային օրենսդրության խախտումները Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանը չի ընդունում, քանի որ 2002թ-ի հունվարից փաստացի դադարեցրել է անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը, ինչի կապակցությամբ հարկային մարմնի պահանջով 19.06.2002 թ-ին վճարել է 10.000 դրամ հաստատագրված վճար: Այնուհետև ներկայացրել է համապատասխան դիմում և կտրոն, որից հետո հարկային մարմինը մինչ օրս իրենից պարտավորությունների գանձում չի իրականացրել, հաշվետվություններ չի պահանջել: Տվյալ դեպքում անհասկանալի է, թե ինչու հանկարծ կայացվել է բողոքարկվող վարչական ակտը: Եթե հարկային մարմինը ոչ մի գործողություն չի իրականացրել կամ էլ քաջատեյալ լինելով բոլոր տնտեսվարող սուբյեկտների գործունեության մասին, երբևէ տեսուչը չի զգուշացրել, որ հարկային օրենսդրության խախտում է թույլ տրվել, ապա հարկային մարմնի նման գործողությունները կասկածի տեղիք են տալիս:

Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանը հայտնում է, որ երբևէ չի հրաժարվել հարկային պարտավորությունները կատարելուց և հավատացել է հարկային մարմնի օրինական գործունեությանը, սակայն երբ գործունեություն չիրականացրած և գործունեությունը վաղուց դադարած անհատ ձեռնարկատիրոջից հարկ են պահանջում, դա չի բխում օրենսդրության պահանջներից:

Հարկային մարմնում, եթե ընդունենք, որ հաշվարկվել են բողոքարկվող որոշման հիմքում դրված հարկերը, ապա հարկային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար վարչական մարմինը պետք է վաղուց իր նախաձեռնությամբ հարուցեր վարչական վարույթ և իրականացներ գանձման գործընթացը, մինչդեռ տարիներով լռելուց հետո հանկարծ իրենց անգործությունը պարտակելու նպատակով հանդես են գալիս որպես պահանջատեր:

Մինչև բողոքարկվող վարչական ակտի ընդունելը հարկային մարմինը երբևէ չի ծանուցել հարկային պարտավորությունների մասին: Միաժամանակ հարկ է նշել, որ վիճարկվող որոշումը կայացնելիս հաշվի չի առնվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթները:

Հարկային պարտավորությունը, ըստ որոշման բովանդակության, առաջացել է 2002թ-ի ապրիլ և 2003 թ-ի մարտ ամիսների համար, ինչպես նաև 2015 թ-ի հունվարի

17-ի դրությամբ իբր առկա է 79603 դրամ չկատարված հարկային պարտավորություն: Եթե ուսումնասիրենք Ա/Ձ-ի վկայականը, ապա կարելի է պարզել, որ գործողության ժամկետը սահմանված է մինչև 2010 թ-ի դեկտեմբերի 31-ը, իսկ վերոգրյալ հաշվարկներից երևում է, որ հաստատագրված վճարներ հաշվարկելիս հարկային մարմինն այդ պարտավորության գծով թույլ տրված խախտումները հայտնաբերել է այն կատարելուց անմիջապես հետո՝ մինչև երեք տարին լրանալը:

Գանգատում բերված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի, 70 հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի, 76-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանը խնդրում է բավարարել գանգատը և անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 17.11.2015թ-ին ընդունված թիվ 466-11 որոշումը:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 17.11.2015 թ-ի դրությամբ հաստատագրված վճարի գծով նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 79.603 դրամ: Նշված պարտավորությունները առաջացել են 2002 թ-ի ապրիլ և 2003 թ-ի մարտ ամիսների համար ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության հիման վրա հաշվարկված գումարներից և դրանք սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժերից:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 17.11.2015 թ-ին ընդունվել է թիվ 466/11 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանից 79.603 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

01.01.2002թ-ի դրությամբ Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանի պարտքը հաստատագրված վճարի գծով կազմել է ապառք 2480 դրամ, տույժ՝ 392 դրամ: 2001թ-ին հաստատագրված վճարի գծով Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանի կողմից վերջին վճարումը կատարվել է 28.12.2001թ-ին՝ գումարով 10.000 դրամ:

Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանի կողմից ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը ներկայացվել է 31.10.2001թ-ին, որի համաձայն ավտոտրանսպորտային գործունեությամբ զբաղվել է ամսական 5 օր, որի համար հաստատագրված վճարի գումարը կազմել է 6240 դրամ: Դադարեցման դիմումը Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանի կողմից ներկայացվել է 03.05.2002թ-ին:

Քննարկվող դեպքում 2002թ-ի հունվար, փետրված, մարտ, ապրիլ ամիսների համար Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանի անձնական հաշվի քարտում հաստատագրված



վճարի գծով հաշվարկվել են պարտավորություններ, ինչպես նաև դրանք սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկվել են տույժեր:

Հարկ է նշել, որ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 27.12.2001 թ-ի թիվ ՀՕ-277 ՀՀ Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից հետո՝ քսան օրվա ընթացքում, օրենքի 7-րդ հոդվածի «ա», «գ», «դ», «ժդ», «ժը», «ժթ» ենթակետերով նախատեսված գործունեություն իրականացնող վճարողները պարտավոր են իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմին ներկայացնել հայտարարություն՝ ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ»:

Վերոգրյալ իրավանորմի դրույթներից հետևում է, որ Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանի կողմից «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի դ) կետով նախատեսված ավտոտրանսպորտային գործունեության մասով 2002 թ-ի հունվար ամսվա համար հաշվառման վայրի հարկային տեսչության մարմին ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն չներկայացվելու պայմաններում 2002թ-ի հունվար, փետրված, մարտ, ապրիլ ամիսների համար հաստատագրված վճարի գծով պարտավորություններ չէին կարող հաշվարկվել, այնինչ քննարկվող դեպքում հաշվարկվել են:

Նշված փաստական հանգամանքներից հետևում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 17.11.2015 թ-ի թիվ 466-11 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները չեն արտացոլում Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանի հաստատագրված վճարի գծով առկա պարտավորությունների իրական չափը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 17.11.2015 թ-ի թիվ 466-11 որոշումը:

2. ՀՀ ՖՆ Գորիսի ՏՀՏ-ին՝ կատարել Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանի հաստատագրված վճարի գծով պարտավորությունների վերահաշվարկ:

3. ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետին՝ սույն որոշման 2-րդ կետի համաձայն կատարված վերահաշվարկի արդյունքում առաջացած պարտավորությունները Ա/Ձ Մարտունիկ Ալեքսանյանի կողմից չվճարվելու դեպքում կայացնել նոր որոշում՝ դրանք սահմանված կարգով գանձելու վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ